«Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՆԵՐ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐՅԱՆԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակով անվանի երգահաններ Ալեքսանդր Հարությունյանին և Տիգրան Մանսուրյանին շնորհվել է Հայ Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշան՝ արդի հայ երաժշտության զարգացման գործում ունեցած կարևոր ավանդի համար:

Ապրիլի 21-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Վեհարանի դահլիճում, տեղի ունեցավ հանդիսություն, որի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը շքանշաններ հանձնեց սիրված երգահաններին:

Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանի բացման խոսքից հետո երաժշտագետներ Արաքս Սարյանն ու Անանա Արևշատյանն անդրադարձան Ալեքսանդր Հարությունյանի և Տիգրան Մանսուրյանի հարուստ և բազմաժանր ստեղծագործական ուղուն: Ապա «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո բերվեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսի զույգ կոնդակները, որոնք հանդիսավորապես ընթերցեցին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը և Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս. Աղամյանը:

Բարձր գնահատելով Ալ. Հարությունյանի և Տ. Մանսուրյանի ստեղծագործական վաստակը, Ամենայն Հայոց Հայրապետն իր սրբատառ կոնդակում առանձնացնում է նրանց նպաստը հոգևոր երաժշտության զարգացման գործում: Ալ. Հարությունյանի «Գթա Տէր»-ի անզուգական մշակումը հաճախ է հնչում Հայ Եկեղեցում՝ հոգեհանգստյան արարողության ժամանակ, իսկ Տիգրան Մանսուրյանի հոգևոր թեմաներով գրված գործերից հիշատակելի է հատկապես Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետի «Հաւատով խոստովանիմ» խորագրով աղոթքների հիման վրա գրված նույնանուն երաժշտական ստեղծագործությունը:

Շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին իրենց վաստակին տրված բարձր գնահատականի համար՝ մեծանուն արվեստագետները հավաստիացրեցին, որ այսուհետ ևս պիտի նպաստեն հայ մշակույթի առաջընթացին:

Հանդիսության ավարտին Վեհափառ Հայրապետը մեկ անգամ ևս իր օրհնությունն ու գնահատանքը հայտնեց երգահաններին:

«Նրանք իրենց ստեղծագործական վաստակով ոչ միայն հոչակ, անուն, պատիվ և փառք են բերել մեր ժողովրդին, հարստացրել գանձարանը հայ մշակույթի, ճանաչել տվել մեր ժողովրդին հաչս օտարաց, այլ նաև կարևոր մի առաքելություն են իրականացրել մեր ազգի և մեր հայրենիքի կյանքում: Նրանք իրենց կարևոր նպաստն են բերել հայապահպանության սուրբ գործին: Հայրենիքից հեռու, օտարության մեջ ապրող յուրաքանչյուր հայորդի բերկրանք և ցնծություն է ապրում և հպարտության զգացումով տոգորվում, երբ զանազան հոչակավոր բեմերից հնչում է հայ արվեստագետի ստեղծագործությունը: Այն նոր ոգի է փոխանցում, ուժ է տալիս դիմակայելու բոլոր փորձություններին, ճանապարհ է հարթում

դեպի իր ազգային ինքնությունն ու արժեքային համակարգը և կարծես թե նրա մեջ ուխտի վերանորոգում է կատարվում»,- նշեց Հայոց Հայրապետը:

Հանդիսությանը ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Թամարա Պողոսյանը, գիտության և մշակույթի անվանի գործիչներ:

Հանդիսության ընթացքում հնչեցին նաև երգահանների ստեղծագործություններից՝ Հայաստանի կամերային երգչախմբի կատարմամբ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԻՐ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ ՏՎԵՑ ՄԵԾԱՏԱՂԱՆԴ ԵՐԳՉՈՒՀԻ ԻԶԱԲԵԼ ԲԱՅՐԱՔԴԱՐՅԱՆԻՆ

Ապրիլի 19-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Մետրոպոլիտեն» օպերայի մենակատար, կանադահայ ճանաչված երգչուհի Իզաբել Բայրաքդարյանին:

Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը տվեց մեծատաղանդ երգչուհուն՝ իր գնահատանքը հաղորդելով նրան հայ եկեղեցական երաժշտությունն աշխարհի տարբեր բեմերից հնչեցնելու համար:

«Հաճելի է տեսնել ճանաչում և հռչակ ունեցող հայուհու, որն իր քայլերն է ուղղել դեպի իր հայրենիքը՝ իր սերն ու նվիրումը բերելով Հայաստան աշխարհին ու Մայր Եկեղեցուն՝ Սրբություն Սրբոց Ս. Էջմիածնին: Դուք Ձեր գործունեությամբ և անդուլ աշխատանքի շնորհիվ գալիս եք հռչակը հավելելու մեր ազգի, պանծացնելու ինչպես Ձեր անունը, այնպես էլ մեր ազգի»,- նշեց Նորին Սրբությունը:

«Վեհափա՛ռ Տեր, հոգուս և սրտիս սնունդն է հայ հոգևոր երաժշտությունը, քանզի անկարելի է ապրել առանց հավատքի, և այն բոլոր շնորհները, որ Աստված ինձ պարգևել է, պիտի ի սպաս դնեմ հանուն մեր հայրենիքի և մեր Սուրբ Եկեղեցու»,- շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ հավատաց Իզաբել Բայրաքդարյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ